ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք.Երևան, Զաքիյան 2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 702
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

20.05.2017թ.
№ 01/01/590-17

Հայաստանի Հանրապետության
ոստիկանության պետ, գեներալ-գնդապետ՝
պարոն Վլադիմիր Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԵԷԴ/0135/01/16 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արտաշես Չիչոյանի, Խաչիկ Կոսյանի, Արարատ Նիկողոսյանի, Յուրի Հակոբյանի և Արթուր Զաքարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերի ու 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի:

Նշված գործով փաստաբան Ինեսսա Պետրոսյանը ներկայացնում է տուժող՝ Եղիշե Խաչատրյանի իրավահաջորդ՝ Փառանձեմ Մեյթիխանյանի և տուժող՝ Էմմա Աբրահամյանի շահերը:

03.05.2017թ. դատական նիստին պաշտպանական կողմի միջնորդության վերաբերյալ Ինեսսա Պետրոսյանի կողմից դիրքորոշում հայտնելու պահին դատական նիստերի դահլիճում գտնվող որոշ անձինք սկսել են հայհոյանքներով ու այլ արտահայտություններով վիրավորել և սպառնալ իր մասնագիտական պարտականությունները կատարող փաստաբան Ինեսսա Պետրոսյանին:

Այդ մասին նույն օրը հրապարակումներ են եղել տարբեր լրատվամիջոցներում, որոնցից են՝ www.aravot.am կայքի՝ «Սեռական բնույթի հայհոյանքներ՝ փաստաբանի հասցեին», www.armtimes.am կայքի՝ «Միջադեպ դատարանում. Ամբաստանյալների հարազատները հայհոյեցին Մեյթիխանյանի փաստաբանին. վիդեո», www.pastinfo.am կայքի՝ «Լեզվաբանի ամուսնու սպանության գործն առանց միջադեպերի չի անցնում» վերտառությամբ հրապարակումները:

Այսօր փաստաբան Ինեսսա Պետրոսյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է NARINE ARZUMANYAN անվամբ օգտատիրոջ կողմից իրեն ուղղված լատինատառ նամակը՝ իրեն ու իր ընտանիքին ուղղված սպառնալիքներով, որն ավարտվում է հետևյալ կերպ. «*Ու քեզ չի փրկի ոչ տիկին լեզվաբանը, ոչ էլ իրավապահները: Էտ երդումա մեր կողմից, հիշի ու փախի*»:

Վերը նշվածը արարքը կարող է պարունակել ՀՀ քրեական օրենսգրքի 332.3 հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ (փաստաբանի լիազորությունները խոչընդոտելը և փաստաբանի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նրա լիազորությունների իրականացման հետ):

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

- *արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը* (**21-րդ հոդված, մաս 2**).
- *պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով* (**22-րդ հոդված, մաս 2**):

Փաստաբանը, նրա ընտանիքի անդամները և նրանց գույքը գտնվում են պետության պաշտպանության ներքո:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով,

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան մարմիններին՝

- պարզել NARINE ARZUMANYAN անվամբ օգտատիրոջ ինքնությունը և սպառնալիքն իրականացնելու իրական վտանգը, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձի կամ անձանց նկատմամբ,
- ձեռնարկել փաստաբան Ինեսսա Պետրոսյանի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան